

Բովանդակություն

Գլուխ 1.	Ընկերության նկարագիրը	3
Գլուխ 2.	Ընկերության գործարար ծրագրի մշակման հիմնադրույթները	4
Գլուխ 3.	Ընկերության առաքելությունը	5
Գլուխ 4.	Ընկերության նպատակները	6
Գլուխ 5.	Ընկերության գործունեության հիմնական ուղղությունները	8
Գլուխ 6.	Նախորդ պլանային ժամանակաշրջանի նպատակները, խնդիրները և կատարողականը	10
Գլուխ 7.	Ընկերության արտադրատնտեսական գործունեության դիվերսիֆիկացիայի ապահովում	12
Գլուխ 8.	Ընկերության հեռանկարային զարգացումը	14
Գլուխ 9.	Ընկերության օպտիմալացման ուղղությամբ տարվող աշխատանքներ	15

Հավելվածներ՝

- Հավելված 1: Ընկերության վարչակազմակերպական կառուցվածքը:
Հավելված 2: Ընկերության 2026թ. սպասվելիք եկամուտները:
Հավելված 3: Ընկերության 2026թ. գործարար ծրագրի ֆինանսական պլանը:

ԳԼՈՒԽ 1. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ

«Ատոմային էլեկտրակայանների շահագործման հայկական գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ (կրճատ «Չայատոմ» ՓԲԸ), ստեղծվել է 1973թ., որպես Ատոմային էլեկտրակայանների շահագործման (ԱԷԿ) Համամիութենական Գիտահետազոտական Ինստիտուտի ք. Մոսկվա (ВНИИ АЭС) Երևանյան մասնաճյուղ:

1995թ.-ից այն հանդիսանում է փակ բաժնետիրական ընկերություն և, կանոնադրության համաձայն, շահույթ հետապնդող առևտրային կազմակերպություն:

Ընկերության կանոնադրական կապիտալը հավասար է 58 780 000 (հիսուսուհինգ միլիոն յոթ հարյուր ութսուն հազար) դրամ, որը կազմում է 5 878 (հինգ հազար ութ հարյուր յոթանասուսուներեք) հասարակ (սովորական) անվանական բաժնետոմս:

Բոլոր բաժնետոմսերը տեղաբաշխված են, պատկանում են Հայաստանի Հանրապետությանը, 100 %-ով վճարված են նրա կողմից և կառավարվում են Հայաստանի Հանրապետության կառավարության և նրա լիազոր մարմնի՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից:

Ընկերությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքով, «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքով, «Խաղաղ նպատակներով ատոմային էներգիայի անվտանգ օգտագործման մասին» ՀՀ օրենքով, Հայաստանի Հանրապետության այլ օրենքներով, տարբեր իրավական ակտերով և ընկերության կանոնադրությամբ:

Ընկերության հիմնական նպատակն է գիտատեխնիկական աջակցություն ցույց տալ ատոմակայաններին (մասնավորապես ՀԱԷԿ-ին) նախագծման, շահագործման և շահագործումից դուրս բերման գործընթացներում: Նման կազմակերպություն ունենալը «Ատոմային կայանների անվտանգության ապահովման ընդհանուր դրույթների» (ՕՈՑ-88/97, ՈՒԱՅ Դ-01-011-97) և Ատոմային էներգիայի միջազգային գործակալության պարտադիր պահանջներից մեկն է:

Ընկերությունն իր հիմնական գործունեությունը ծավալում է ատոմային էլեկտրակայանների շահագործման համար անհրաժեշտ գիտատեխնիկական արտադրանք ստեղծելու ոլորտում, այդ թվում՝ գիտահետազոտական աշխատանքների իրականացում, ԱԷԿ-ների նորմալ շահագործման և վթարային ռեժիմների ուսումնասիրություն, տարբեր բնույթի ախտորոշիչ և ինժեներական համակարգերի մշակում և ներդրում, շահագործման տեխնիկական և տեխնոլոգիական փաստաթղթերի մշակում, ինչպես նաև ԱԷԿ-ների շահագործող

անձնակազմի պատրաստման և վերապատրաստման համար տարբեր տեսակի տեխնիկական միջոցների մշակում, պատրաստում և ներդրում:

Վերը նշված ուղղություններով աշխատանքներն իրականացվում են ընկերությունում գործող հետևյալ ստորաբաժանումների միջոցով՝

- ԱԷԿ միջուկային անվտանգության, տեղեկատվական համակարգերի և վարժասարքերի մշակման - 01 լաբորատորիա:
- Մետաղների հետազոտման և հսկման - 02 լաբորատորիա:
- ԱԷԿ էներգաբլոկների շահագործման գիտատեխնիկական օժանդակման - 03 լաբորատորիա:
- ԱԷԿ էներգաբլոկների վերանորոգման գիտատեխնիկական օժանդակման - 04 լաբորատորիա:
- ԱԷԿ էներգաբլոկների հսկողության, սարքավորումների կարգաբերման և սեյսմիկ պաշտպանության համակարգերի մշակման - 05 լաբորատորիա:
- Կոնստրուկտորային նախագծման - 06 լաբորատորիա:
- Փորձնական արտադրություն:

Ընկերությունը գտնվում է Երևան քաղաքի Զարավ-արևմտյան թաղամասում, Ծովակալ Իսակովի 50/12 հասցեում:

Ընկերության վարչակազմակերպչական կառուցվածքը բերված է հավելված 1-ում:

ԳԼՈՒԽ 2. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՐԱՐ ԾՐԱԳՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՀԻՄՆԱԴՐՈՒՅՑՆԵՐԸ

Սույն գործարար ծրագրի մշակման համար իրավական հիմք է հանդիսացել «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 84-րդ հոդվածը և ՀՀ կառավարության 05.10.2017թ № 1262-Ն որոշումը, ինչպես նաև «Հայատոմ» ՓԲԸ-ի գլխավոր տնօրենի հետ կնքված աշխատանքային պայմանագրի 3.8 հոդվածը:

Գործարար ծրագրի ստեղծման հիմնական խնդիրն է՝ նպաստել ընկերության գիտահետազոտական և արտադրատեխնիկական ստորաբաժանումների լիարժեք գործունեությանը, ակտիվացնել «Հայատոմ» ԳՀԻ ՓԲԸ և էներգետիկայի ոլորտի այլ ձեռնարկությունների համագործակցությունը, ներկայացնել ընկերության ֆինանսական կայունության հիմնական նախապայմանները, ինչպես նաև բացահայտել արտադրատնտեսական այն լրացուցիչ խթանները, որոնք կարող են ապահովել ընկերության տնտեսական հետագա աճը:

Ենթադրվում է նաև, որ այս գործարար ծրագիրը կհանդիսանա համընդհանուր ընդգրկում ունեցող տնտեսական մի այնպիսի գործիք, որն առավել կակտիվացնի

ընկերության գիտահետազոտական և արտադրատնտեսական գործունեությունը, կապահովի ընկերության ստորաբաժանումների լիարժեք զբաղվածությունը

Գործարար ծրագրի տրամաբանության առաջնահերթություններից է նաև աջակցումը նոր աշխատատեղերի ստեղծման գործին, ինչի շնորհիվ ընկերության գործունեության մեջ կներգրավվեն նոր անձինք, հատկապես երիտասարդ մասնագետներ, առանց որոնց հնարավոր չէ պատկերացնել յուրաքանչյուր գիտահետազոտական ինստիտուտի ապագան:

Գործարար ծրագրի մշակման շրջանակում իրականացված ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ընկերության կողմից իրականացվող գիտահետազոտական գործունեությունն ունի ծավալների զարգացման լայն հնարավորություններ, որոնց հայտնաբերման և դրանք տնտեսական հետագա հաշվարկներում ներառելու համար անհրաժեշտ է նախ և առաջ կազմակերպել ինստիտուտի գիտատեխնիկական արտադրանք հանդիսացող աշխատանքների շուկայի ուսումնասիրում:

Շուկայի նախնական ուսումնասիրություններից երևում է նաև, որ ընկերության կողմից իրականացվող աշխատանքները բավականաչափ մրցունակ են և հաջողությամբ դուրս են գալիս ազատ շուկայական մրցակցային դաշտ: Գիտատեխնիկական յուրաքանչյուր արտադրանքի համար առանձին նախատեսվում է մշակել մարքեթինգային պլան, որտեղ հերթականությամբ նշված կլինեն իրականացվելիք բոլոր նպատակային քայլերը:

Չարկ է նշել, որ ընկերության խորհրդի ու տնօրինության կողմնորոշիչ աշխատառճն այս ոլորտում մշտապես թույլ է տվել անաչառ գնահատելու ստեղծված իրավիճակները, իսկ առաջացած ընթացիկ մարքեթինգային խնդիրներին տրվել են հնարավորինս իրատեսական լուծումներ:

ԳԼՈՒԽ 3 . ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Ընկերության ստեղծման նպատակն է տնտեսական գործունեության իրականացմամբ շահույթի ստացումը:

Ընկերության հիմնական առաքելությունն է գիտատեխնիկական աջակցություն ԱԷԿ-ների նախագծման, շահագործման (ՅԱԷԿ) և շահագործումից դուրս բերման գործընթացում:

Իր առջև դրված նպատակներն իրականացնելու համար, Ընկերությունը զբաղվում է տնտեսական գործունեության հետևյալ հիմնական տեսակներով՝

- գիտատեխնիկական և գիտահետազոտական աշխատանքներ,

- ատոմային էլեկտրակայանների, միջուկային տեղակայքների, ՋԷԿ, հատուկ նշանակության օբյեկտների սարքերի, սարքավորումների, համակարգերի նախագծում, պատրաստում և ներդրում,
- ԱԷԿ-ների անվտանգ շահագործման համար տարբեր բնույթի ախտորոշիչ և ինֆորմացիոն համակարգերի մշակում և ներդրում,
- ԱԷԿ-ների անվտանգության մակարդակի բարձրացման տարաբնույթ աշխատանքների և ծառայությունների իրականացում,
- նախագծային կոնստրուկտորական մշակումների,
- ԱԷԿ սարքավորումների և համակարգերի շահագործման, վերանորոգման նորմատիվ տեխնիկական և տեխնոլոգիական փաստաթղթերի մշակում,
- ԱԷԿ-ների վթարային ռեժիմների ուսումնասիրություն և դրանց կառավարման ուղեցույցների մշակում,
- էներգետիկայի սարքավորումների և համակարգերի կարգաբերում,
- ԱԷԿ-ների շահագործող անձնակազմի պատրաստման և վերապատրաստման համար տարբեր տեսակի տեխնիկական միջոցների նախագծում, պատրաստում, դրանց ներդրում և այլն:

Գործարար ծրագիրը մշակել է «Հայատոմ» ԳՀԻ ՓԲԸ Տնտեսագիտական և պայմանագրային բաժնի պետ Տ. Մարգարյանը (հեռախոս՝ 010 73-48-43, բջջ. (055) 90 99 66)՝ գիտատեխնիկական ստորաբաժանումների ղեկավարների ներգրավմամբ, իսկ աշխատանքները կոորդինացրել է «Հայատոմ» ԳՀԻ ՓԲԸ գլխավոր տնօրեն, տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր՝ Վ.Գ.Պետրոսյանը (հեռախոս՝ 010 74-21-30, բջջ. 091 436-426):

ԳԼՈՒԽ 4. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Ընկերության հետագա զարգացման տրամաբանությունը ներկայացված է երկու հասկանալի ուղղվածությամբ՝

- ընկերության գիտատեխնիկական և արտադրատեխնիկական գործունեության հնարավորինս լայն դիվերսիֆիկացում,
- նոր աշխատատեղերի ստեղծում՝ ընկերության գիտատեխնիկական, գիտահետազոտական և արտադրատեխնիկական գործունեության մեջ նոր, հատկապես երիտասարդ մասնագետ կադրերի ներգրավում:

Հարկ է նշել, որ տնօրինությունը մշտապես ձգտել է վարել տնտեսության ընդլայնողական քաղաքականություն, ինչը, սակայն, դժվարությունների է հանդիպել՝ պահանջվող ֆինանսական ներդրումների, ինչպես նաև ատոմային էներգետիկայի բնագավառի կադրերի սղության, բացակայության պատճառով:

Ընկերության ղեկավարությունն այսօր ծրագրում է զարգացնել ինստիտուտի գիտահետազոտական գործունեությունը հետևյալ 7 հիմնական ուղղություններով՝

1. ԱԷԿ-ների անվտանգության հիմնավորման աշխատանքների իրականացում, հաշվի առնելով ՀԱԷԿ 2-րդ էներգաբլոկի շահագործման ժամկետի ընթացքում կատարված փոփոխությունները (անալիտիկ հիմնավորումներ, հաշվարկներ, դրանց հիման վրա վթարային իրավիճակների կառավարման ուղեցույցների մշակում):
2. ԱԷԿ սարքավորումների և խողովակաշարերի մետաղների, եռակցման կարերի ստուգում և հսկում:
3. ՀԱԷԿ 2-րդ էներգաբլոկի շահագործման հանձնված լիամասշտաբ վարժասարքի սպասարկում և ուղեկցում: Համագործակցություն ԱՄՆ WSC կազմակերպության հետ, «Հայատոմ» ՓԲԸ կադրերի ներգրավմամբ լիամասշտաբ վարժասարքի մշակում և ներդրում՝ արտերկրի ԱԷԿ-ների համար:
4. Մասնակցություն ՀԱԷԿ-ի 2-րդ էներգաբլոկի անվտանգության պարբերական դիտարկման գործընթացին:
5. Հակասեյսմիկ պաշտպանության նոր արդիականացված թվային համակարգի (СИА3-3М) ընդլայնված արտադրության կազմակերպում և ներդրում էներգետիկայի տարբեր օբյեկտներում:
6. Տարվում են աշխատանքներ ՀԱԷԿ շահագործման հանձնված ինժեներական սեյսմիկ կայանը (ИСС) ներդնել ՌԴ Նախագծով կառուցվող ԱԷԿ-ներում:
7. Տարվում են աշխատանքներ ՌԴ «Ատոմէներգոպրոյեկտ» կազմակերպության հետ համատեղ Նախագծային աշխատանքներ իրականացնելու ուղղությամբ:

Նշված բոլոր ուղղություններով աշխատանքներն իրատեսական են և իրականացված ներդրումները համարվում են արդարացված: Ընդ որում այդ ներդրումները պետք է իրականացնել համալիր կերպով, այսինքն ներդրումներ իրականացնել, ինչպես ժամանակակից սարքավորումների ձեռքբերման, այնպես էլ մասնագիտական կադրերի պատրաստման ու որակավորման բարձրացման ուղղությամբ:

Առաջին չորս ուղղությունները փոխկապված են, և դրանք կապված են ՀԱԷԿ 2-րդ էներգաբլոկի շահագործման ժամկետի երկարացման 2-րդ փուլի աշխատանքների հետ: Այն իրատեսական է, և այդ ուղղությամբ Ինստիտուտի ղեկավարությունը ակնկալում է ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության աջակցությունը:

Տարվում են բանակցություններ ՌԴ «Ատոմէներգոպրոյեկտ» և «Ատոմտեխնենբո» կազմակերպությունների հետ նոր պայմանագրեր կնքելու համար:

Առաջիկայում պլանավորում ենք գործնական արդյունքներ ունենալ չքայքայող մեթոդներով ՀԱԷԿ սարքավորումների և խողովակաշարերի մետաղների հետազոտման և հսկման աշխատանքներում: Այս աշխատանքները ՀԱԷԿ-ում իրականացվում են արտերկրի կազմակերպությունների կողմից և բավականին մեծ գումար դուրս է գալիս Հանրապետությունից: Նախատեսում ենք, «Հայատոմ» ՓԲԸ արդեն բացված, «Մետաղների հետազոտման և հսկման» լաբորատորիան կահավորել ժամանակակից սարքավորումներով և իրականացնել երիտասարդ կադրերի վերապատրաստում: «Հայատոմ» ՓԲԸ հինգ երիտասարդ մասնագետներ 2025թ. ԱՄՆ PNNL կազմակերպությունում անցել են վերապատրաստման դարևթացներ: 2026թ. սպասվում է ԱՄՆ Էներգետիկայի Դեպարտամենտի աջակցությունը սարքավորումների տրամադրման և կադրերի վերապատրաստման միջոցառումներ:

Ընկերության համար հեռանկարային է (մոտ ապագայում) Ռադիացիոն հսկողության և միջուկային ռեակտորների ֆիզիկական հաշվարկման լաբորատորիայի ստեղծումը:

ՉԼՈՒԽ 5. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ընկերության հիմնական գործունեությունը իրականացվում է հետևյալ վեց ուղղություններով՝

- Մշակումներ, կապված ԱԷԿ-ների անվտանգության հիմնավորման հետ,
- ԱԷԿ-ների անվտանգության ապահովման ախտորոշիչ, տեղեկատվական և այլ համակարգերի մշակում և ներդրում,
- ԱԷԿ-ների շահագործող և վերանորոգող անձնակազմների պատրաստման ու վերապատրաստման համար համակարգերի մշակում և ներդրում,
- ԱԷԿ-ների սարքավորումների և համակարգերի շահագործման ու վերանորոգման նորմատիվ տեխնիկական և տեխնոլոգիական փաստաթղթերի մշակում,
- ԱԷԿ-ների անվտանգ աշխատանքի ապահովում սեյսմիկ պայմաններում,
- ԱԷԿ-ների սարքավորումների և խողովակաշարերի մետաղների, եռակցման կարերի հետազոտում և հսկում:

Այսօր ինստիտուտի գիտատեխնիկական արտադրանքի գլխավոր սպառողն ու պատվիրատուն Հայկական ԱԷԿ-ն է: Ինստիտուտը միշտ եղել է ՀԱԷԿ-ի հետ միևնույն արտադրատեխնիկական դաշտում, նրա վերաթողարկման պահից մինչ օրս:

2026թ. սպասվում է Հայկական ԱԷԿ-ի երկրորդ էներգաբլոկի անվտանգության հիմնավորման փաստաթղթերի մշակման աշխատանքների շարունակումը՝ մասնավորապես, ՀԱԷԿ ծանր վթարների հաշվարկային հետազոտությունները, ծանր վթարների կառավարման ուղեցույցների և դրանց տեխնիկական հիմնավորումների մշակումները:

ՀԱԷԿ-ի անվտանգության վերլուծության աշխատանքների շրջանակներում իրականացվել են MELCOR և RELAP ծրագրային փաթեթներով հաշվարկներ, նախապես սահմանված տարբեր սցենարների՝ 2-րդ մակարդակի ռիսկի հավանականային վերլուծության չափորոշիչների բավարարման հիմնավորման համար:

2026թ. ավարտին է հասցվելու «ՀԱԷԿ-ի 2-րդ էներգաբլոկի անվտանգության պարբերական դիտարկում» ծառայությունների մատուցման հաշվետվությունը:

Նշված բոլոր 5 ուղղություններով աշխատանքներ են իրականացվել «Հայատոմ» ՓԲԸ կողմից, որը նպաստել է ՀԱԷԿ 2-րդ էներգաբլոկի անվտանգության մակարդակի բարձրացմանը:

Ընկերության կողմից իրականացվում են աշխատանքներ՝ կապված ՀԱԷԿ 2-րդ էներգաբլոկի շահագործման ժամկետի երկարացման հետ:

Ավարտին է հասցվում ՀԱԷԿ 2-րդ էներգաբլոկի «Անվտանգության հիմնավորման հաշվետվության» նոր տարբերակի մշակումը, որտեղ հաշվի են առնված էներգաբլոկի արդիականացման, ինչպես նաև ՀՀ Միջուկային անվտանգության կարգավորման կոմիտեի կողմից ներկայացված պահանջները՝ հաշվետվության բովանդակության և ձևաչափի վերաբերյալ: Այս ուղղությամբ տարված աշխատանքները հիմք են հանդիսանալու ՀԱԷԿ 2-րդ էներգաբլոկի հետագա շահագործման համար արտոնագրի ստացմանը:

«Հայատոմ» ՓԲԸ (առ այսօր միակը հանրապետությունում) ՀՀ Միջուկային անվտանգության կարգավորման կոմիտեից ստացել է հետևյալ արտոնագրերը.

1. «Ատոմային էներգիայի օգտագործման օբյեկտների համար անվտանգության տեսակետից կարևոր սարքերի, սարքավորումների, համակարգերի նախագծում»,
2. «Ատոմային էներգիայի օգտագործման օբյեկտների համար անվտանգության տեսակետից կարևոր սարքերի, սարքավորումների, համակարգերի պատրաստում»:

2025թ. վերոնշյալ երկու արտոնագրերի ժամկետները երկարացվել են ևս 5 տարով:

Այս արտոնագրերը ընկերությանը թույլ են տալիս իրականացնել անվտանգության տեսակետից կարևոր սարքերի, սարքավորումների, համակարգերի նախագծման և պատրաստման աշխատանքներ, ինչպես Հայկական ԱԷԿ-ի, այնպես էլ արտերկրների ատոմային էլեկտրակայանների համար:

Ընկերությունը 2024թ. ստացել է հավաստագիր, առ այն, որ Ընկերության որակի կառավարման համակարգը համապատասխանում է ISO-9001-2015 միջազգային ստանդարտին:

Վերջին տարիներին իրականացրած աշխատանքների շնորհիվ, «Հայատոմ» ՓԲԸ-ն միջուկային էներգետիկայի ասպարեզում ճանաչվել է ԱԷԿ-ներին գիտատեխնիկական աջակցություն ցուցաբերող ազգային ծառայություն: Այսօր ընկերությունն ունի միջազգային հայտնի գործընկերների լայն շրջանակ, որոնց հետ ակտիվ համագործակցում է ԱԷԿ-ների շահագործման բնագավառում: Նման կազմակերպություններից են՝ ՌԴ «Ռուսատոմ Սերվիս» ԲԸ, «Ատոմտեխնետերգո» ԲԸ, ВНИИАЭС, ԱԳԿ «Կուրչատովի ինստիտուտ» և «Հիդրոպրես» ՓԿԲ, Ամերիկայի Միացյալ Նահանգների ANL, PNNL, WSC, Ֆրանսիայի CORYS, , Իտալիայի SOGIN, Անգլիայի NNC, Բելգիայի «Բելգատոմ» Տրակտերբել, Հոլանդիայի NRG (Միջուկային հետազոտությունների և խորհրդատվական կենտրոն), Սլովակիայի VUJE, Չեխիայի REZ - (Միջուկային հետազոտությունների կենտրոն) կազմակերպությունները և այլն:

ԳԼՈՒԽ 6. ՆԱԽՈՐԴ ՊԼԱՆԱՅԻՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ, ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԸ

«Հայատոմ» ՓԲԸ նախորդ տարիների գիտական և արտադրական գործունեությունը հիմնականում ծավալվել է ԱԷԿ-ների շահագործող անձնակազմի պատրաստման և վերապատրաստման համակարգերի մշակման աշխատանքների շրջանակներում, ներառյալ լիանասշտաբ և տարբեր տիպի մասնագիտացված վարժասարքերի,

«Հայատոմ» ՓԲԸ կողմից մշակվել և ՀԱԷԿ-ում ներդրվել են՝

- կոմպակտ և բազմաֆունկցիոնալ վարժասարքերը,
- անվտանգության պարամետրերի ներկայացման համակարգը,
- ՀԱԷԿ-ի պարամետրերի ինֆորմացիոն հաշվիչ համակարգը,
- առաջին կոնտուրից ջերմատարի արտահոսքի և առաջին կոնտուրում օտար կոմպոնենտների ախտորոշման համակարգը,
- աղբյուրի տիրույթում նեյտրոնային հոսքի հսկման համակարգը,
- ռեակտորի հզորության ավտոմատ կարգավորման համակարգը (APM),
- շոգու գլխավոր կոլեկտորում (ԲՈՒԿ) ճնշման կարգավորման համակարգը,

- ՀԱԷԿ-ի անվտանգության հիմնավորման և դետերմինիստական վերլուծության աշխատանքները,
- ՋԶԷՌ ռեակտորներով ԱԷԿ-ներում հնարավոր ծանր վթարների մաթեմատիկական մոդելավորման և հաշվարկման ալգորիթմներին և դրանց կառավարման ուղեցույցների մշակման աշխատանքները,
- ռեակտորի վթարային պաշտպանության համակարգի արդիականացում,
- ՀԱԷԿ 2-րդ էներգաբլոկի լիամասշտաբ վարժասարքը, որը 2025թ. հանձնել է շահագործման,
- ՀԱԷԿ 2-րդ էներգաբլոկի առաջին կոնտուրի հիմնական սարքավորումների տեղաշարժերի ավտոմատ հսկման համակարգը (АСИК),
- ՀԱԷԿ ՓԲԸ նախագծային փաստաթղթերի էլեկտրոնային փաստաթղթերի ստեղծումը և թվայնացումը,
- ՀԱԷԿ 2-րդ էներգաբլոկի հեղուկ ռադիոակտիվ թափոնների հսկման թվային համակարգը,
- ՀԱԷԿ ՓԲԸ ինժեներական սեյսմիկ կայանի (ИСС) մշտադիտարկման համակարգը և այլն:

ԱԷԿ-ները սեյսմիկ պայմաններում անվտանգ շահագործման նպատակով՝ ռեակտորային տեղակայանքի պաշտպանության համար, «Հայատոմ» ՓԲԸ-ի կողմից մշակվել են հակասեյսմիկ պաշտպանության արդյունաբերական համակարգեր՝ (СИА3-2 և СИА3-3), հաջողությամբ կազմակերպվել է դրանց արտադրությունը և ներդրումը Ռուսաստանի, Ուկրաինայի, Սլովակիայի և Հայաստանի ԱԷԿ-ներում:

СИА3-2 և СИА3-3 համակարգերն անցել են համապատասխան ստուգումներ Ռուսաստանի Դաշնության մետրոլոգիական և չափագիտական պետական ծառայության կողմից և ստացել համապատասխան գրանցման վկայական Ռուսաստանի Դաշնության էներգետիկական օբյեկտներում օգտագործելու համար:

Կից հավելվածներով ներկայացված են 2026թ. եկամուտների և ծախսերի նախահաշիվները, ըստ հոդվածների: Ավելորդ չենք համարում նշել, որ «Հայատոմ» ՓԲԸ հանդիսանում է ինքնաֆինանսավորվող կազմակերպություն, բազային ֆինանսավորում չունի բյուջեից և ֆինանսական տատանումներն անխուսափելի են: Եկամուտների մասով 2026թ. կնքված պայմանագրերի կատարումից սպասվելիք 180 662.0 հազար դրամի եկամուտները հիմնավորված են արդեն կնքված հետևյալ պայմանագրերով՝

1. ՀԱԷԿ-ի 2-րդ էներգաբլոկի անվտանգության պարբերական դիտարկման ծառայության մատուցում, 16 002.0 հազ. դրամ գումարի աշխատանքները նախատեսվում է ավարտել 2026թ.-ին:

2. ՀԱԷԿ-ի 2-րդ Էներգաբլոկի ծանր վթարների կառավարման ձեռնարկի լրամշակում ծառայության մատուցում, 139 600.0 հազ. դրամ գումարի աշխատանքները նախատեսվում է ավարտել 2026թ.-ին:
3. ՀԱԷԿ-ի իրադարձությունների տվյալների ծրագրերի թարմացված տարբերակի մշակում և տեղադրում ՀԱԷԿ ծառայության մատուցում, աշխատանքները 15 900.0 հազ. դրամ գումարով նախատեսվում է ավարտել 2026թ.-ին:
4. INSC/2022/433-417, AOSA նախագծի շրջանակում «ENCO» կազմակերպությանը ծառայությունների մատուցում (Ավստրիայի Հանրապետություն), սպասվում են 1000.0 հազ.դրամի մուտքեր:
5. Այլ եկամուտների մասով սպասվում է 8 160.0 հազ. դրամի մուտքեր՝ սպասարկումների ծառայություններից և այլ աղբյուրներից:

Ծախսերի մասով նախատեսված են հետևյալ հոդվածները՝

1. Աշխատավարձի ծախսը կազմում է 110 885.0 հազ. դրամ:
2. Գործուղման ծախսերը 900.0 հազ. դրամ:
3. Վարչական ծախսերը կազմում են 27 750.0 հազ. դրամ, այդ թվում՝ հիմնական միջոցների մաշվածություն, էլեկտրաէներգիա, պաշարներ, չփոխհատուցվող հարկերից ծախսեր, պետական տուրքեր, փոստի և հեռահաղորդակցության ծախսեր, այլն:
4. Շահույթի գումարը կանխատեսվում է 4 600.0 հազ. դրամի չափով:
5. ՀՀ ռեզիդենտների հետ կնքված պայմանագրերը կնքված են ԱԱՀ-ով, որի հետևանքով առաջանում է 36 027.0 հազ. դրամի պարտավորություն: 2026թ. ընթացքում կանխատեսվում է մի քանի նոր պայմանագրերի կնքում արտերկրի կոլեգիալ կազմակերպությունների և «ՀԱԷԿ» ՓԲԸ հետ:

ԳԼՈՒԽ 7. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԴՐԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԻՎԵՐՍԻՖԻԿԱՑԻԱՅԻ ԱՊԱՅՈՎՈՒՄԸ

Ընկերության արտադրատնտեսական գործունեությունն, գտնվում է Հայաստանի ընդհանուր տնտեսական դաշտում և հանդիսանալով այդ տնտեսական դաշտի մի մասնիկը, մշտապես ենթարկվում է որոշակի վտանգների (ռիսկերի): Սրանց բացահայտումն ու գնահատումը կարևոր դերակատարություն ունեն ինստիտուտի կողմից նախատեսված ծրագրերի հետագա հաջողության ապահովման գործում:

Սրանք հանդիսանում են ռազմավարական վտանգներ, որովհետև վնասում են ինստիտուտի գործունեությանը: Ակնհայտ է, որ յուրաքանչյուր վտանգ ինստիտուտի գործունեության վրա ունի ազդեցության տարբեր աստիճան, իսկ ինստիտուտն ունի

դրանցից յուրաքանչյուրի ազդեցության չեզոքացման համապատասխան տարբերակներ: Մասնավորապես, երիտասարդ կադրերի պակասը լրացնելու և հոսունության դեմն առնելու նպատակով, ինստիտուտի ղեկավարությունը սահմանել է ամսական մինչև 20 000 ՀՀ դրամի չափով լրացուցիչ հավելավճարներ երիտասարդ կադրերի համար:

Բավականաչափ բարդ խնդիր է արտադրատնտեսական գործունեության բավարար դիվերսիֆիկացիայի ապահովումը որոշակի ուղղվածություն ունեցող գիտահետազոտական ինստիտուտի համար:

Ինստիտուտի գործունեության դիվերսիֆիկացիայի ակնհայտ փաստ է համարվում սույն ծրագրի 4-րդ գլխում ներկայացված ընկերության զարգացման հեռանկարային 7 ոլորտների ընտրությունը:

Հնարավոր գործառնական վտանգներից են՝

- օգտագործվող հումքերի, նյութերի և նախապատրաստուկների գների անկայունությունը շուկայում,

- ՀՀ Կառավարության 10 հոկտեմբերի 2019 թվականի № 1422-Ն որոշման 32-րդ կետի 17-րդ ենթակետի պահանջները՝ ըստ որի մինչև 80 000.0 հազ. դրամ գումարի հայտարարված մրցույթում հաղթելու դեպքում պետք է ներկայացնել պայմանագրի 30 %-ի չափով բանկային երաշխիք, իսկ 80 000.0 հազ. դրամը գերազանցող գումարի հայտարարված մրցույթում հաղթելու դեպքում պետք է ներկայացնել պայմանագրի 45 %-ի չափով բանկային երաշխիք, որը խիստ դժվար իրականացվելի է մեր ընկերության համար, իսկ որոշ դեպքերում պրակտիկորեն անհնարին է դառնում մեր մասնակցությունը մրցույթին:

Դիվերսիֆիկացիայի ապահովման կիրառվող մոտեցումներից է նաև այլ կազմակերպությունների հետ կոնսորցիումով աշխատանքների իրականացումը, ինչի շնորհիվ որոշակիորեն ընդլայնվում են Ինստիտուտի գործունեության շրջանակները և/կամ հնարավորություն է ստեղծվում մասնակցել այնպիսի գնումների մրցույթների, որոնց առանձին մասնակցությունը հնարավոր չէ բանկային երաշխիքների ապահովման տեսանկյունից:

Հնարավոր տնտեսական /ֆինանսական/ վտանգները հիմնականում կապված են արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների հետ:

Այսօր ինֆլացիոն անբարենպաստ գործընթացները պարունակում են ռիսկեր: Ընկերության առևտրատնտեսական բանկային գործունեությունն իր հերթին սահմանափակվում է նվազ ինֆլացիոն վտանգներ պարունակող ֆինանսատնտեսական պարտավորություններով: Ամեն դեպքում, ընկերության տնօրինությունը մշտապես հետևում է Հայաստանի տնտեսության մակրոտնտեսական ցուցանիշների դինամիկային և կտրուկ փոփոխությունների,

անգամ ամենափոքր նախանշանների առկայության դեպքում, ձեռնարկում է համապատասխան բնույթի գործառույթներ:

Գերխնդիրը, ամեն դեպքում, կայուն ֆինանսների առկայությունն է: Այսօր կան բոլոր նախադրյալները կանխատեսելու, որ 2026թ. և մոտակա տարիներին ընկերության եկամուտները վերջին տարիների նման կլինեն բավականաչափ կայուն և ընկերությունը կկատարի իր առջև դրված խնդիրները:

ԳԼՈՒԽ 8. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԵՌԱՆԿԱՐԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Ընկերության ղեկավարությունն այսօր ծրագրում է առաջին 3 տարիների ընթացքում զարգացնել ինստիտուտի գիտահետազոտական և արտադրական գործունեությունը հետևյալ 6 հիմնական ուղղություններով՝

1. ՀԱԷԿ 2-րդ էներգաբլոկի շահագործման ժամկետի երկարացման աշխատանքների իրականացում (ՇԺԵ-2),
2. Հայաստանի Հանրապետությունում նոր միջուկային էներգաբլոկի կառուցման սկզբնական աշխատանքների և ծառայությունների իրականացում,
3. ՀԱԷԿ 2-րդ էներգաբլոկի լիամասշտաբ վարժասարքի շահագործման ընթացքում առաջ եկած խնդիրների մշակում և սպասարկում,
4. ԱԷԿ սարքավորումների, խողովակաշարերի մետաղի, եռակցման կարերի ստուգում և հսկում՝ չքայքայող մեթոդներով (ՉՄ):
5. Սեյսմիկ մոնիտորինգի և հակասեյսմիկ պաշտպանության նոր թվային համակարգի (СИА3-3М) ներդրման իրականացում Ռուսական նախագծով կառուցված ԱԷԿ-ներում:
6. ՌԴ կողմից կառուցվող ԱԷԿ-ների համակարգերի նախագծման և դրանց շահագործման ուղեցույցների մշակում և այլն:

Նշված բոլոր ուղղություններն էլ ատոմային էներգետիկայի բնագավառում հանդիսանում են ժամանակակից ոլորտներ, որտեղ իրականացված ներդրումները համարվում են արդարացված: Ընդ որում, այդ ներդրումները պետք է իրականացնել համալիր կերպով, այսինքն ներդրումներ իրականացնել, ինչպես ժամանակակից սարքավորումների ձեռքբերման, այնպես էլ մասնագիտական կադրերի պատրաստման ու որակավորման բարձրացման, ինչպես նաև շուկայի շարունակական ուսումնասիրման ուղղություններով:

Վերոնշյալ բոլոր ուղղություններով սպասվող աշխատանքներն իրատեսական են:

ԳԼՈՒԽ 9. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՕՊՏԻՄԱԼԱՑՄԱՆ ՈՒՂՈՒԹՅԱՄԲ ՏԱՐԿՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

1. Օժանդակ ստորաբաժանումներում ժամանակ առ ժամանակ համատեղել ոչ ծանրաբեռնված պաշտոնները և ստեղծել քանակական տեսակետից օպտիմալ անձնակազմ, որն անհրաժեշտ է ընկերության նորմալ գործունեության համար:
2. Ընկերության ֆինանսական մրցունակությունը դարձնել կոլեկտիվ, թիմային աշխատանքի արդյունք, որտեղ ներկայացված կլինեն բոլորի կողմից կատարված աշխատանքները:
3. Ձարգացնել գիտատեխնիկական բազմակողմանի համագործակցություն Չայկական ԱԷԿ-ի և արտերկրների ԱԷԿ-ների հետ:
4. Ստեղծել ռեալ պայմաններ ինստիտուտի աշխատանքների մեջ երիտասարդ գիտական կադրեր ներգրավելու համար:
5. Անհրաժեշտ սարքավորումներով համալրել մետաղների ստուգման և հսկման լաբորատորիան, որի իրականացումը իրատեսական է 2026թ. ԱՄՆ «PNNL» կազմակերպության աջակցությամբ:
6. Ստեղծել աշխատանքային նոր ռեսուրսներ, վերապատրաստել նոր կադրեր և համալրել մետաղների հսկման լաբորատորիան անհրաժեշտ որակյալ կադրերով ԱՄՆ «PNNL» կազմակերպության մասնագետների կողմից 2026թ. հունիսին կազմակերպվելու է դասընթացներ նշված ուղղությամբ:
7. Սահուն և իրատեսական գործընթացով իրականացնել կադրերի սերնդափոխությունը:
8. Իրականացնել նոր գիտատեխնիկական մշակումներ՝ ԱԷԿ-ների անվտանգության մակարդակի բարձրացման ուղղությամբ:
9. Իրականացնել բոլոր այն բազմակողմանի միջոցառումները, որոնք կնպաստեն աշխատանքային նոր ծավալների ձեռքբերմանը:
10. Բարձրացնել ինստիտուտի աշխատակիցների աշխատավարձերը այն հաշվարկով, որ լինի գրավիչ երիտասարդ կադրերի ներգրավման համար, դրանով իսկ կանխելով կադրերի արտահոսքը: Այն իրականացնելու համար ակնկալում ենք ՀՀ ՏԿԵ նախարարության աջակցությունը:
11. Կայուն եկամուտներ ունենալու դեպքում ինստիտուտի աշխատակիցներին տրամադրել բժշկական և սոցիալական ապահովագրական փաթեթներ՝ ընկերության եկամուտների հաշվին:

ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ՝



Վ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Հավելված 2

«Հայաստոմ» գրհի ՓԲԸ կատարելիք աշխատանքների ծավալը 2026թ.
Հազ.դրամ

Ր/հ	Թեմայի համար	Թեմայի անվանում	2026թ		
			Գումարը առանց ԱԱՀ	ԱԱՀ	Գումարը ԱԱՀ-ով
1	2503	ՀԱԷԿ 2-ՐԴ ԷՆԵՐԳԱԲԼՈԿԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄ (ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄՈՒՄ)	13,335.0	2,667.0	16,002.0
2	2504	ՀԱԷԿ-Ի ԹԻՎ 2 ԷՆԵՐԳԱԲԼՈԿԻ ԾԱՆՐ ԿԹԱՐՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՁԵՌՆԱՐԿԻ ԼՐԱՄՇԱԿՈՒՄ (ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՈՒՄ)	109,750.0	29,850.0	139,600.0
3	2505	ՀԱԷԿ ՓԲԸ-Ի ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԾՐԱԳՐԵՐԻ ԹԱՐՄԱՅՎԱԾ ՏԱՐԲԵՐԱԿԻ ՄՇԱԿՈՒՄ ԵՎ ՏԵՂԱԴՐՈՒՄ ՀԱԷԿ (ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՄԱՏՈՒՑՈՒՄ)	13,250.0	2,650.0	15,900.0
4	2801	ՀԱԷԿ-Ի ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ /ԱՎԱՍՏՐԻԱ ENCO/	1,000.0		1,000.0
5		Եկամուտներ այլ ծառայություններից	7,300.0	860.0	8,160.0
		Ընդամենը	144,635.0	36,027.0	180,662.0

Գլխավոր տնօրեն

Վ. Պետրոսյան

ՏՊԲ պետ

Տ. Մարգարյան

Հավելված 3

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

«Հայաստան» ԳՀԻ ՓԲԸ գլխավոր տնօրեն

Վ. Պետրոսյան

2026թ «Հայաստան» ԳՀԻ ՓԲԸ

Գործարար ծրագրի ֆինանսական պլան

ա. Ընկերության սպասվելիք եկամուտները՝ ըստ աղբյուրների						
h/h	Եկամտի աղբյուրը	Ընդամենը հազ.դրամ	1-ին եռ.	2-րդ եռ.	3-րդ եռ.	4-րդ եռ.
1	ՀԱԷԿ ՓԲԸ	171,502.0	33,600.0	46,800.0	47,802.0	43,300.0
2	Արտերկրյա ծեռն. Ավստրիա	1,000.0	250.0	250.0	250.0	250.0
3	Այլ եկամուտներ	8,160.0	2,040.0	2,040.0	2,040.0	2,040.0
4	Ընդամենը	180,662.0	35,890.0	49,090.0	50,092.0	45,590.0
բ. Ծախսերը ըստ ուղղությունների						
h/h	Ծախսերի հոդվածներ	Ընդամենը հազ.դրամ	1-ին եռ.	2-րդ եռ.	3-րդ եռ.	4-րդ եռ.
1	Աշխատավարձի վճարման ֆոնդ	110,885.0	27,200.0	27,200.0	27,200.0	29,285.0
2	Գործուղման ծախսեր	900.0	225.0	225.0	225.0	225.0
3	Վարչական ծախսեր, այդ թվում	27,750.0	7,450.0	6,400.0	6,450.0	7,450.0
3.1	ՀՄ մաշվածություն	12,800.0	3,200.0	3,200.0	3,200.0	3,200.0
3.2	Էլեկտրաէներգիա	3,000.0	1,100.0	400.0	400.0	1,100.0
3.3	Վառելիք, պահեստամասեր	1,550.0	400.0	300.0	450.0	400.0
3.4	Չփոխհատուցվող հարկերից ծախսեր	1,300.0	300.0	300.0	400.0	300.0
3.5	Զուլմբ, նյութեր	1,600.0	400.0	400.0	400.0	400.0
3.6	Փոստի և հեռահաղ. ծախսեր	1,150.0	280.0	280.0	280.0	310.0
3.7	Այլ ծախսեր	3,500.0	875.0	875.0	875.0	875.0
4	Ընդամենը (1+2+3)	139,535.0	34,875.0	33,825.0	33,875.0	36,960.0
5	Ենթակապալային աշխատանքներ	500.0	125.0	125.0	125.0	125.0
6	Շահույթ 4-րդ տողից	4,600.0	1,150.0	1,150.0	1,150.0	1,150.0
7	Հարկային պարտավորություն (ԱԱՀ)	36,027.0	9,200.0	7,200.0	10,427.0	9,200.0
8	Հանրագումար	180,662.0	45,350.0	42,300.0	45,577.0	47,435.0

ՏՊԲ պետ

Տ. Մարգարյան